ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում, ստորև ներկայացնում է «Բեռնատարների անիվների» ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-4/2» ծածկագրով ընթացակարգի արդյունքում 2017թ-ի դեկտեմբերի 25-ին կնքված N ՀՄԱԱՊՁԲ-4/2-1 ծածկագրով պայմանագրում 2018թ. հունվարի 31-ին կատարված փոփոխության (այսուհետև՝ Փոփոխություն) վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Պայմանագրի կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշել են Պայմանագրի գնման ժամանակացույցում կատարել փոփոխություն:

Փոփոխության նկարագրություն: Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրի գնման ժամանակացույցում կատարել փոփոխություն, որը ներառված է Փոփոխությանը կից N 1 հավելվածում: Քանի որ ապրանքների մատակարարման համար Պայմանագրով նախատեսվել էր կանխավճար՝ Պայմանագրի գնի 100 տոկոսի չափով, ուստի վճարման ժամանակացույցի մեջ փոփոխություն չի կատարվել:

Փոփոխության հիմնավորում: Սույն փոփոխությունը կատարվում է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 8.6 կետը: Սույն փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 04.05.2017թ. № 526-Ն որոշմամբ սահմանված արհեստական փոփոխությունների շարքին: Պայմանագրում նման փոփոխություն կատարվում է առաջին անգամ: Պայմանագրով կողմերի փոխադարձ պարտավորությունները դեռ չեն ավարտվել:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԳՓՁ վարչության բաժնի պետ Ա. Ամիրյանին:

Հեռախոս՝ 010-29-43-53;

Էլ. փոստ՝ a.amiryan@mil.am:

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն:

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

մինչև փոփոխությունը

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Չափման մ/վ	Քանակը	Միավորի գինը	Ընդամենը	2018թ գնման ժամանակացույց ըստ ամիսների	
						Հունվար	
1	3	4	5	6	7	9	
1	բեռնատարների անիվներ (անվադող 12,00-18, Մոդելը՝ K-70, ԳԱԶ-66, 3308 մակնիշի ԱՏ-ների համար)	հատ	636	154798	98451528	636	
2	բեռնատարների անիվներ (անվադող 425/85R21, Մոդելը՝ O-184 TYREX CRG POWER, ԿամԱԶ-43118 ԱՏ-ների համար)	հատ	440	214798	94511120	440	
3	բեռնատարների անիվներ (անվադող 14,00-20, Մոդելը՝ ՕՍ-25, ՈՒրալ-4320, 375 ԱՏ-ների համար)	հատ	830	144798	120182340	830	

թիվ 1 փոփոխությամբ

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Չափման մ/վ	Քանակը	Միավորի գինը	Ընդամենը	2018թ գնման ժամանակացույց ըստ ամիսների	
						Հունվար	Փետրվար
1	բեռնատարների անիվներ (անվադող 12,00-18, Մոդելը՝ K-70, ԳԱԶ-66, 3308 մակնիշի ԱՏ-ների համար)	հատ	636	154798	98451528	304	332
2	բեռնատարների անիվներ (անվադող 425/85R21, Մոդելը՝ O-184 TYREX CRG POWER, ԿամԱԶ-43118 ԱՏ-ների համար)	հատ	440	214798	94511120	440	
3	բեռնատարների անիվներ (անվադող 14,00-20, Մոդելը՝ ՕՍ-25, ՈՒրալ-4320, 375 ԱՏ-ների համար)	հատ	830	144798	120182340	830	

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ N 1
N ՀՄԱՊՁԲ-4/2-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան

31.01. 2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի պժկ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «Արպանիվ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Խանդանյանի, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր՝ հիմք ընդունելով 25.12.2017թ. կնքված N ՀՄԱՊՁԲ-4/2-1 գնման Պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.6 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն փոփոխությունը (այսուհետև՝ Փոփոխություն) հետևյալի մասին.

1. Փոփոխության առարկան

1.1 Սույնով Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրին կից գնման ժամանակացույցում կատարել փոփոխություն, որը ներկայացված են սույն փոփոխությանը կից № 1 Հավելվածով: Քանի որ ապրանքների մատակարարման համար Պայմանագրով նախատեսվել էր կանխավճար՝ Պայմանագրի գնի 100 տոկոսի չափով, ուստի վճարման ժամանակացույցի մեջ փոփոխություն չի կատարվել:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Փոփոխությունն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն Փոփոխության մեջ չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ապրանքի հանձման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Փոփոխությունը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն փոփոխությանը կից Հավելված N 1-ը հանդիսանում է փոփոխության անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Արպանիվ» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ՀՀ.ք. Երևան, Նար-Դոսի 122,
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«HSBC Բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 002119584001
ՀՎՀՀ 00867415	ՀՎՀՀ 09209297
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԺԿ	Տնօրեն
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	Ա. ԽԱՆԴԱՆՅԱՆ

Հավելված N 1 ՀՄԱԱՊՁԲ 4/2-1
ծածկագրով գնման պայմանագրի թիվ 1 Փոփոխության

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
մինչև փոփոխությունը

ՀՀ	Ապրանքի անվանումը	Չափման մ/ա	Քանակը	Միավորի գինը	Ընդամենը	2018թ գնման ժամանակացույց ըստ ամիսների	
						Հունվար	
1	3	4	5	6	7	9	
1	բեռնատարների անիվներ (անվադող 12,00-18, Մոդելը՝ K-70, ԳԱԶ-66, 3308 մակնիշի ԱՏ-ների համար)	հատ	636	154798	98451528	636	
2	բեռնատարների անիվներ (անվադող 425/85R21, Մոդելը՝ O-184 TYREX CRG POWER, ԿամԱԶ-43118 ԱՏ-ների համար)	հատ	440	214798	94511120	440	
3	բեռնատարների անիվներ (անվադող 14,00-20, Մոդելը՝ ՕՍ-25, ՈՒրալ-4320, 375 ԱՏ-ների համար)	հատ	830	144798	120182340	830	

թիվ 1 փոփոխությամբ

ՀՀ	Ապրանքի անվանումը	Չափման մ/ա	Քանակը	Միավորի գինը	Ընդամենը	2018թ գնման ժամանակացույց ըստ ամիսների	
						Հունվար	Փետրվար
1	բեռնատարների անիվներ (անվադող 12,00-18, Մոդելը՝ K-70, ԳԱԶ-66, 3308 մակնիշի ԱՏ-ների համար)	հատ	636	154798	98451528	304	332
2	բեռնատարների անիվներ (անվադող 425/85R21, Մոդելը՝ O-184 TYREX CRG POWER, ԿամԱԶ-43118 ԱՏ-ների համար)	հատ	440	214798	94511120	440	
3	բեռնատարների անիվներ (անվադող 14,00-20, Մոդելը՝ ՕՍ-25, ՈՒրալ-4320, 375 ԱՏ-ների համար)	հատ	830	144798	120182340	830	

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ՝ գնդապետ
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«Արպանիվ» ՍՊԸ
Տնօրեն
Դավիթ ՊԱՆՏԵՍ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՄԱԱՊՁԲ-4/2-1

ք. Երևան 25.12. 2017թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և «Արպանիվ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Խանդանյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

2.1.8 Չնեղ ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 313 144 988 (երեք հարյուր տասներեք միլիոն հարյուր քառասունչորս հազար ինը հարյուր ութսունութ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Պայմանագրի գնից՝ մինչև 313 144 988 (երեք հարյուր տասներեք միլիոն հարյուր քառասունչորս հազար ինը հարյուր ութսունութ) ՀՀ դրամը, Գնորդը փոխանցում է Վաճառողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ: Կանխավճարի տրամադրումը պայմանագիր կնքվելուց հետո 5 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 29.12.2017թ.:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ծեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Սույն պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՋՈՒ սպառազինության վարչությունը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Արպանիվ» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ՀՀ ք. Երևան, Նար-Դոսի 122,
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«HSBC Բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 06211958400
ՀՎՀՀ 00867415	ՀՎՀՀ 09209297
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԺԿ	Տնօրեն
Կ. ԿԱԲԱՊԵՏՅԱՆ	Ա. ԽԱՆԴԱՆՅԱՆ

Հավելված N 1
N ՀՄԱԱՊՁԲ-4/2-1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

ՀՀ	Ապրանքի անվանումը	Չափման միավորը	Նշանակությունը	Անվադողի անվանումը, պահպանաշերտի մոդելը	Անվադողի արտադրողը (Brand)	Անվադողի վրա նշված լինի			
						Անվադողի չափսը	Անվադողի բեռնվածության ինդեքսը և արագության կատեգորիան	Անվադողի բեռնվածության առավելագույն հզորությունը, կգ/զույգ	Անվադողի գինը առանց ԱԱՀ-ի
1	3	4	5	6	7	8	9	10	11
1	բեռնատարների անիվներ (անվադող 12,00-18, Մոդելը՝ К-70, ԳԱԶ-66, 3308 մակնիշի ԱՏ-ների համար)	լրակազմով	պահպանաշերտի գծանկարը-*բարձր անցողության, դողի կառուցվածքը դիագոնալ*	К-70	ОАО "Омскшина"	PR8	J(100)	129	1850
2	բեռնատարների անիվներ (անվադող 425/85R21, Մոդելը՝ О-184 TYREX CRG POWER, КамАЗ-43118 ԱՏ-ների համար)	լրակազմով	պահպանաշերտի գծանկարը-բարձր անցողության, դողի կառուցվածքը ռադիալ	"О-184 TYREX CRG POWER"	ОАО "Омскшина"	PR14	K(110)	146	3000
3	բեռնատարների անիվներ (անվադող 14,00-20, Մոդելը՝ ՕՍ-25, ՈՒրալ-4320, 375 ԱՏ-ների համար)	լրակազմով	պահպանաշերտի գծանկարը-բարձր անցողության, դողի կառուցվածքը դիագոնալ	ՕՍ-25	ОАО "Омскшина"	PR10	G(85, 90)	140	2500

Ծանոթություն:

1. Անվադողի համալրվածությունը լրակազմով՝ խցավոր, անվախուցը փականով՝ նախատեսված ըստ անվադողի չափի, իսկ հատի դեպքում՝ առանց անվախուցի:

2. Անվադողի արտադրության տարեթիվը սկսած 2016թ-ից:

3. Անվադողի վրա նշված լինի արտադրող երկիրը և անվադողի անվանումը:

4. Ապրանքի որակավորման փուլում մասնակիցների կողմից ներկայացվեն մատակարարվող անվադողի անվանումը/բրենդը (ինչը հետագայում պետք է մատակարարվի և նշվի պայմանագրում) և մատակարարման (ընդունման) ժամանակ ներկայացնել մուտքագրվող անվադողի համապատասխանության վերաբերյալ սերտեֆիկատը, առանձնահատուկ դեպքերում տեխնիկական բնութագրում նշված ցուցանիշները հավաստիացնող փաստաթուղթ կամ տեխնիկական ցուցանիշներին համապատասխան որակի վերաբերյալ անձնագիր՝ տրված արտադրող գործարանի կողմից, որտեղ արտացոլվի որակը հավաստող և պայմանագրով նախատեսված տեխնիկական ցուցանիշները:

5. Անվադողերի երաշխիքային ժամկետը տեղադրման պահից սկսած 1 տարի կամ 5000կմ վազք աշխատատևողությամբ:

6. Մատակարարված անվադողերի ժամանակից շուտ շարքից դուրսգալու դեպքում, բողոքարկման (ռեկլամացիոն) աշխատանքները կազմակերպել ՀՀ ՋՈՒ ՍՎ ավտոմոբիլային ծառայության (զորամասի, ստորաբաժանման) և մատակարար կազմակերպության մասնագետների անմիջական մասնակցությամբ, տեխնիկական խոտանի դեպքում վերականգնումը մատակարարող կազմակերպության կողմից նմանատիպ առարկայով՝ նախապես հաշվի առնելով ժամանակից շուտ շարքից դուրս գալու պատճառները, մնացած դեպքերում ըստ ուսումնասիրությունների արդյունքների:

7. Ապրանքները պետք է լինեն նոր և չօգտագործված:

8. Ապրանքները պետք է հանձնվեն Կոտայքի մարզ, ք.Եղվարդ, Եղվարդի խճ. ՀՀ ՊՆ 84029 զորամաս:

Ապրանքի անվանումը	Ապրանքային նշանը	Արտադրողի անվանումը	Ծագման երկիրը
բեռնատարների անիվներ (անվադող 12,00-18, Մոդելը՝ К-70, ԳԱԶ-66, 3308 մակնիշի ԱՏ-ների համար)	К-70	ОАО "Омскшина"	Ռուսաստան
բեռնատարների անիվներ (անվադող 425/85R21, Մոդելը՝ О-184 TYREX CRG POWER, ԿամԱԶ-43118 ԱՏ-ների համար)	"О-184 TYREX CRG POWER"	ОАО "Омскшина"	Ռուսաստան
բեռնատարների անիվներ (անվադող 14,00-20, Մոդելը՝ ОИ-25, ՈՒրալ-4320, 375 ԱՏ-ների համար)	ОИ-25	ОАО "Омскшина"	Ռուսաստան

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Չափման մ/վ	Քանակը	Միավորի գինը	Ընդամենը	2018թ գնման ժամանակացույց ըստ ամիսների
						Հունվար
1	3	4	5	6	7	9
1	բեռնատարների անիվներ (անվադող 12,00-18, Մոդելը՝ K-70, ԳԱԶ-66, 3308 մակնիշի ԱՏ-ների համար)	հատ	636	154798	98451528	636
2	բեռնատարների անիվներ (անվադող 425/85R21, Մոդելը՝ O-184 TYREX CRG POWER, ԿամԱԶ-43118 ԱՏ-ների համար)	հատ	440	214798	94511120	440
3	բեռնատարների անիվներ (անվադող 14,00-20, Մոդելը՝ ՕԻ-25, ՈՒրալ-4320, 375 ԱՏ-ների համար)	հատ	830	144798	120182340	830

Ծանոթություն՝ Նախատեսվում է կանխավճար 100%-ի չափով: Լրակազմերով մատակարարման ենթակա անվադողերի անվանացանկը ներկայացված է պայմանագրի տեխնիկական բնութագրում: Ապրանքները պետք է լինեն չօգտագործված: Ապրանքները պետք է հանձնվեն Կոտայքի մարզ, ք.Եղվարդ, Եղվարդի խճ. ՀՀ ՊՆ 84029 զորամաս:

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«Արպանիկ»-ԱՊԸ

Տնօրեն

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հավելված N 2
N ՀՄԱԱՊՁԲ-4/2-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հ/հ	Ապրանքի անվանում	CPV կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ., այդ թվում՝ (տոկոսներով)	
				Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 29.12.17թ
1	Բեռնատարների անիվներ (անվադող 12,00-18, Մոդելը՝ K-70, ԳԱԶ-66, 3308 մակնիշի ԱՏ-ների համար)	34351400-29/14/2		98451528
2	Բեռնատարների անիվներ (բեռնատարների անիվներ (անվադող 425/85R21, Մոդելը՝ O-184 TYREX CRG POWER, ԿամԱԶ-43118 ԱՏ-ների համար)	34351400-31/14/2		94511120 [redacted]
3	Բեռնատարների անիվներ (անվադող 14,00-20, Մոդելը՝ ՕՍ-25, ՈՒրալ-4320, 375 ԱՏ-ների համար))	34351400-32/14/2		120182340 [redacted]

Նախատեսվում է կանխավճար 100%-ի չափով:

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«Արդաֆիլ» ՍՊԸ

Տ.Հ.

Ա. ԽԱՆԴԱՄԻՐՅԱՆ

Հավելված N 3
N ՀՄԱԱՊՁԲ-4/2-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
_____	_____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱՄԱՆ-ԸՆԴՈՒՆԱՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ՀՄԱԱՊՁԲ-4/2-1 պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն